


ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ. Եթե լռենք, քարերը կաղաղակեն (վեպ-հուշագրություն), Երևան, «Լիմուշ» հրատ., 2014, 500 էջ:

Ընթերցողի սեղանին է դրվել մի հուշագրություն, որն իր ծանրակշիռ պատմականսագրական սկզբնաղբյուրներով գալիս է լրացնելու և մեկ անգամ ևս հաստատելու արևմտահայության ծրագրավորված ցեղասպանության մասին առկա ականատես-վերապրողների շարունակական ցուցմունք-վկայությունները և դրանց միջազգային-իրավական հիմքերի անժխտելիությունը:



Գիրքը լույս է տեսել բ. գ. թ., դոցենտ Հասմիկ Բաղդասարյանի և բ. գ. թ., դոցենտ Փառանձեմ Մեյթիխանյանի խմբագրությամբ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի գրախոսությամբ և նվիրվում է Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

XX դարասկզբին պատմական հայրենիքում սրածված մեր ժողովրդի՝ Եղեռնից մազապուրծ բեկորները ցրվեցին աշխարհով մեկ: Նրանցից մեկը 13-ամյա Հրայր Գևորգյանն էր (ծնված՝ Վանի նահանգի Նորդուզ գավառակի Դիմ գյուղում), որը գետաձորում՝ քարաժայռի մեծ բեկորով ծածկված անդունդի մեջ, սպանված համազյուղացիների ու հարազատների դիակների տակ շնչահեղձ, ի հեճուկս այդ ամենի՝ մաքառելով հասավ Մայր հայրենիք:

Գաղթի դաժան ճանապարհներին ճաքճքված ոտքերով ու ցնցոտիներով Հրայրյան, որին տանը Սևուկ էին ասում, մի քանի անգամ գտնում է եղբորը՝ Վարդանին, և կորցնում (տասնհինգ հոգանոց ընտանիքից փրկվում են միայն երկուսով): Հիշում է, թե ինչպես ինքն ու եղբայրը, պառկած հայրական խրճիթի կտուրին, իրենց հարս Աչանի հետ հաշվում էին երկնքի աստղերը և դրանք բաժանում գյուղի մարդկանց միջև: Հիշում է այն սարսափելի գիշերը, երբ քուրդ Միրմենն իր ավազակախմբով մտավ գյուղը, մահվան սպառնալիքով թալանեց հայ կանանց ու աղջիկների զարդերը և առանձին դրվագներ՝ կապված զոհված ընկերների ու հարազատների հետ: Հիշում է ու շրջվում երեսի վրա, որպեսզի չտեսնի աստղայից երկինքը: Ի դեպ առասպելաբանական պատկերացումների համաձայն՝ մարդկանց հոգիները մերձ հա-

րաբերության մեջ են դրվում չար և բարի աստղերի հետ, և ամեն մարդ աշխարհ է գալիս մի աստղի տակ, որն էլ հենց իր բախտն է՝:

Հետո Սևուկը գաղթականների հետ դանդաղորեն շարժվում է դեպի Արարատյան դաշտ՝ հայացքը չկտրելով Ալագյազի սարալանջերից: Երեկոյան՝ ուշ ժամին, հասնելով խիտ անտառի եզրին՝ գաղթականները պառկում են խոնավ հողակույտերի վրա: Կեսգիշերվա անհանգիստ քնի մեջ Սևուկը պարզորոշ լսում էր անձանոթ կանանց խոսակցությունները նախընթաց օրերին թուրք մարդասպանների կողմից կատարած ոճիրների, հայ կանանց ու աղջիկներին առևանգելու և պղծելու մասին: Նա հիշում է Մսրեին՝ իրենց գյուղի ամենագեղեցիկ նորահարսին, որին գերված ամուսնու աչքերի առաջ քարշ էին տալիս դեպի Օմար աղայի վրանը... հիշում է Մսրեի քրոջը՝ Շուշանիկին, որի հետ էին կապված իր մանկական հոգու անմեղ թրթիռները: «Այդ սուսկալի օրերին մեզանից ո՞վ կարող էր ենթադրել, թե Արարատյան լայնածավալ չնաշխարհիկ հովիտը մի լուսավոր առավոտ դառնալու էր աշխարհով մեկ ցրիվ եկած բազմաչարչար հայ ժողովրդի օրրանը» (էջ 339):

Հրայյա Գևորգյանն իր փրկված կյանքը նվիրեց Հայաստան աշխարհի բարգավաճմանը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց լեզենդար Թամանյան 89-րդ դիվիզիայի կազմում, հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվեց բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Տեղահանության ու կոտորածների դաժան հիշողությունները, սակայն, հանգիստ չէին տալիս բազմազբաղ մարդուն ու մտավորականին: Հաճախ էր աչքերի առաջ հայտնվում քարաժայռի այն մեծ բեկորը, որով շեյխ Խղիբը փակել էր անդունդի բերանը՝ իրեն մատնելով գեհեհի: Հաճախ էր հիշում, որ ուշքի գալով՝ տեսել է միայն մարդկանց արյունով ներկված դեմքերն ու գարնանային թարմ կանաչը, իսկ մեջքին ընկած էր միջոնեկ եղբոր՝ Մարկոսի դիակը: Հիշում է իր և ընկերների ամենասիրած վայրը՝ Ծաղկասարը, որտեղ քրդական աշիրեթների ու թուրք մարդասպանների դեմ անհավասար մարտի մեջ մտնելով՝ զոհվել է իր մեծ եղբայր Բադալը: Ծաղկասարի լանջերին է վիրավորվել իր սիրելի հայրիկը, որը Բադալի կրակոցների պաշտպանության ներքո իր չորս անգեն ընկերներով ձյան հաստ շերտի վրա սահելով իջել է ձորը՝ սպասելով կովոդ որդուն: «Դեպքից երկու օր հետո քուրդ Մամոյի մեծ տղան՝ Ալիհամզոն, խրճիթ մտնելուն պես հայտնեց Բադալի զոհվելու մասին, իսկ երեք օր հետո մեզ հասավ նաև հորս ու նրա ընկերների եղեռնական սպանության բոթը» (էջ 183):

Աշխարհի տարբեր ծագերում ապաստան գտած և դժոխքի միջով անցած հայերին հայտնաբերելն ու խոսեցնելը վերապրողների տեսանկյունից ծանր ու անցանկալի իրողություն է, որին մեզանում առաջինն է լծվել Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքից Հայրենիք ներգաղթած Վերժինե Սվազյանը, որը կես դարից ավելի գրառում, ձայնագ-

¹ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 47:

րում, տեսագրում և ուսումնասիրում է Պատմական Հայաստանի ավելի քան հարյուր տեղավայրերից բռնի տարագրված ու Հայաստանում և Միջուրքում բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների փաստավավերագրական վկայությունները: Պատկերացնում եք, թե ինչպիսի կորուստ կլինեք, եթե Հրաչյա Գևորգյանը, խորհրդային համակեցության շինծու կանոններից երկնչելով, սաստեր իրեն տանջող ցավը և թղթին չհանձնեք XX դարասկզբի Վան-Վասպուրականի հայկական լեռնային գյուղի իրական-պատմական իրադարձությունների, արևմտահայության բռնագաղթի, կոտորածների ու հայրենագրկման մանրամասները, ապրելու տարրական իրավունքը պաշտպանելու համար նրանց մղած արդար ու ապարդյուն ջանքերը:

Հնարավոր չէ առանց հուզմունքի կարդալ գրքի այն տողերը, երբ երեքամյա Հրաչյան գյուղական խրճիթի մի անկյունում ինքնամոռաց խաղում էր նորածին գառնուկի հետ՝ առանց պատկերացնելու մոր մահվան հետ կապված հարազատների իրարանցման, լաց ու ողբի լրջությունը: Ավելին. այդ ծանր իրավիճակում քուրդ ավագակապետ Մերհեի կողմից շարունակ հետապնդվելու պատճառով Սևուկի հայրը Դիմ գյուղից ընտանիքը տեղափոխում է Ադրակի հարուստ քուրդ Հասան բեկի մոտ՝ նրան պատկանող Բլ գյուղում բնակվելու և իր գրագիտությամբ ու լեզուների իմացությամբ բեկին ծառայելու: Բայց այստեղ էլ վրա է հասնում դժբախտությունը. աշնանային մի խավար գիշեր քրդերը խարեությամբ առնանգում են իր քույր Վարդանուշին և անպատիժ փախցնում Պարսկաստան. «Մեզանից ոչ ոք չգիտեր՝ նա կենդանի էր, թե մեռած. մանավանդ երեկվա որոնումներից պարզվել էր, որ փախստականների՝ գիշերվա խավարում Բլիս գետն անցնելու ժամանակ աղջիկը բռնվելով ձիուց իրեն գետն էր նետել, իսկ նրա հետագա վիճակի մասին ձիավորների հանդիպած պարսիկ ականատեսներից ոչ մեկը ճիշտ տեղեկություն չտվեց» (էջ 46): Այս նվաստացումից հետո ընտանիքը բռնում է հետդարձի հարկադիր ճանապարհը: Հայրը քայլում էր գլխիկոր, սիրտը լի դառնությամբ, առանց հետ նայելու, իսկ Սևուկը, նստած ձիու վրա, չէր համարձակվում անգամ մի բառ ասել:

Հուշապատումը ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել մի կողմից՝ հայկական բնաշխարհի գեղեցկության, մյուս կողմից՝ հայրենի հողում հայերի ծանր կենսընթացի, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական անտանելի պայմանների մասին: Իրադրությունը ծանրանում է հատկապես առաջին աշխարհամարտի տարիներին, երբ Թուրքիայի թելադրանքով կամայական հարկահանությանը գումարվում են մշտական գորահավաքներն ու խուզարկությունները, որոնց նպատակն էր հայ զինվորներին գորակոչել և ոչնչացնել ռազմաճակատի առաջնագծում:

«Բնություն-հասարակություն» ներդաշնակությանն ի հակակշիռ՝ հեղինակը նկարագրում է շրջակա միջավայրի գեղեցկությանը հակադրվող թուրք բարբարոսների և քուրդ ավագակախմբերի բռնություններն ու սարսափը, մանավանդ, որ «գյուղը կտրված լինելով հայա-

շատ շրջաններից ու Վան քաղաքից, ամբողջապես շրջապատված էր քուրդ աղաների ու բեկերի մարդկանցով, որոնք թուրքական ժանդարմերիայի արյունախումբ քանդաներից պակաս մարդասպաններ չէին» (էջ 176): Այս հակադրությամբ է պայմանավորված նաև հեղինակի վաղաժամ ծնունդը. «Ահա այդ միջավայրում մի օր՝ ուժեղ հրաձգության ժամանակ, մայրս, աղբյուրից դողդողալով տուն վերադառնալիս, երկունքի ցավերից տանջված, ժամանակից շուտ լույս աշխարհ է բերել ինձ» (էջ 15):

Սևուկը դառնությամբ է հիշում հայերի կոտորածը Բերկրի գետի կիրճում և Աբաղայի դաշտում, հիշում է գյուղի երգիչ Ապրոյի քաղցրահնչյուն երգին ձայնակցող, շղթայակապ հայերին հասցված շեյխ Խդիրի մտրակի հարվածները՝ «Էյ, գյավուրնե՛ր, դեռ չեք մոռացել ամբարիշտ երգերը», ինչին էլ հաջորդում են դահիճների հրացանային համազարկերը (էջ 174): Բարեբախտաբար քույրը՝ Աննան, կարողանում է քուրդ պահակին կաշառելով փրկել եղբոր՝ Վարդանի կյանքը:

Լինելով իր ապուլապերից ավանդած արժեհամակարգի կրողը՝ Սևուկը մանկության տարիներին մեծ հետաքրքրություն է դրսևորել իր ծննդավայրի տեղանունների, լեռնագագաթների, սարերի ու ձորերի, գետերի ու լճերի, հանդերի ու աղբյուրների նկատմամբ: Ուստի նրա համար մահից էլ ծանր էր հասակակից քրդերի պարտադրանքով Ղուրանը համբուրելով դավանափոխ լինելը: Թքելով Ղուրանի վրա և փախուստի դիմելով՝ պատանին երկար ժամանակ փակված է մնում խրճիթում՝ խուսափելով Հասան բեկի տղաների և շեյխ Խդիրի մշտական հետապնդումներից: Մի օր էլ եղբոր կնոջ՝ Աչանի հանձնարարությամբ Սևուկը կոպին տանում է աղբյուրը՝ ջուր խմելու և անհամբեր սպասում է, թե կենդանին երբ կհագեցնի իր ծարավը, որպեսզի շուտ հեռանա աղբյուրից, բայց մինչ կշրջվեր, շեյխը փակում է ճանապարհը և անխնա հարվածում գավազանով. «Զայրույթից սիրտս բաբախում էր. թռկով կապված նորածին հորթի պես սկսեցի պտտվել նրա գավազանի շուրջն ու միանգամից պոկվելով գազանից՝ մի շնչով փախա մինչև մեր տուն՝ աղբյուրի մոտ թողնելով իմ եղբոր մեծ կոպալը» (էջ 33–34):

Գրքում ամեն ինչ իրական է ու ստույգ՝ և՛ տեղանքի նկարագրությունը, և՛ ապրումը, և՛ ցավն ու կսկիծը: Այստեղ ամեն ինչ անուն ունի: Կաղնին, որ տվել էրք դարի սահմանն անցել է, կոչվում է «Շերասվար»: Եվ եթե դրան հավելենք, որ ըստ «Հայերեն արմատական բառարանի»՝ «շեր» նշանակում է ժողովրդական երգ, «շերասաց»՝ բանաստեղծ, երգիչ, և «շեր» արմատով կազմված *širxat*-ը մանանա, իսկ *šerm*-ը՝ ծառ է նշանակում², ապա հասկանալի կդառնան հուշապատման հեղինակի՝ հսկա կաղնու փչակի հետ կապված պատանեկան անմոռանալի թրթիռներն ու կաղնուն տրված ակնածալից «Շերասվար» ծանունը:

² Հ.ր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 515:

Մնուկն ուներ հասակակից մանկական ընկերներ՝ Տիգրանը, Հայկը, Արամը, Արբակը, Սարգիսը, Նիկոլը և հատկապես Մնոն, որին առանձնահատուկ սիրով էր սիրում: Տղաները այնքան էին մտերմացել, կարծես մի մորից ծնված հարազատ եղբայրներ լինեին: □Շերասվար□ սուրբ ծառի փչակում նրանք դանակով կտրել են իրենց մատները և թափած տաք արյունը խառնելով իրար՝ դարձել հավատարիմ ու անբաժան ընկերներ: Արյունառությամբ եղբայրանալու այս ծեսը, որը հայկական կենցաղում պահպանվել է մինչև XX դարի սկիզբը, հայտնի է ողջումադբեր (ախպերացու) անունով: Այդ համախմբվածության ու սիրո շնորհիվ, որի գլուխ կանգնած էր Մնոն, Մնուկն ու իր տակավին անփորձ եղբայրացած ընկերները ոչ միայն կարողացել են բթացնել թշնամու զգոնությունը և կիսամերկ ու սոված, անանցանելի ժայռերով դիմել կազմակերպված փախուստի, այլև վրեժխնդիր լինել թուրք ու քուրդ մարդասպաններից, գառան մորթի հագած շեյխ Ֆդիրից:

Հրաչյա Գևորգյանի խոսքը պարզ է ու վարակիչ, զերծ հորինվածքալին ճիգերից: Գրքի էջերում սփռված հեղինակի «աշխարհագրական դետերմինիզմը» ընթերցողին ծանոթացնում է Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմաններին և դրանցով պայմանավորված մեր ժողովրդի ազգամշակութային առանձնահատկություններին:

Հեղինակը խանդավառությամբ է նկարագրում Բարեկենդանի ծիսական շրթայում կատարվող հարսանեկան արարողության նախապատրաստությունը, հարս ու փեսայի տարազի մանրամասները: Փեսասն հագել էր գոլավոր շալի կտորից կարված Նորդուզի տարազի լայն «շարվար», գունավոր կարձ թևքերով «քյազախա»՝ կարճաբաձկոն (ժիլետ), ոտքերին ուներ կոշիկներ, իսկ գլխին դրված էր գունավոր մետաքսյա «փուշիներով» (թաշկինակ) փաթաթված քուրդ (գլխարկ)՝ զարդարված գեղեցիկ փետուրներով: Հարսը հագնվել էր ավելի շքեղ, քան փեսան: Գունավոր կտորից կարված լայն զգեստը հասնում էր մինչև գետին, երեսը ծածկված էր վառ կարմիր գույնի մետաքսե մեծ «դուզուրով», որի տակից պարզ երևում էին ճակատին ամրացված չորս շարք արծաթյա կանթավոր դրամներ, իսկ բերանը ծածկված էր սպիտակ մետաքսից գործած փոքրիկ «լամբարով» (էջ 84): Այդ բերանակալը վկայում է հայոց մեջ ընդունված չխոսկանության և խուսափման ավանդական սովորույթի մասին, որի համաձայն երիտասարդ հարսները ընտանիքի ավագ անդամների և հատկապես տղամարդկանց հետ հաղորդակցվելու անհրաժեշտության դեպքում դիմում էին ընտանիքի երեխաների միջնորդությանը: Այս առումով ուշագրավ է եղբոր՝ Բադալի կնոջ՝ Աչանի և սկեսրայրի միջև միջնորդի դեր կատարող Մնուկի շահեկան դերը: Աչանը պատրաստվում է լվացք անելու և սկեսրայրին ուզում է ասել, որ սպիտակեղենը փոխի: Մնուկը, օգտվելով առիթից, Աչանի խոսքերը «թարգմանում է» հնարամտորեն և լիաթոք ծիծաղում. □Հարսը ասում է, թե պարսիկները չամիչ են բերել մեր հարևան Պոտոտանի տուն և բրդով փոխարինում են, թո՛ւյլ տուր՝ գնանք առնելու□ (էջ 18):

Ընթերցողը հեղինակի հետ շրջում է նրա մանկության արահետներով, տեսնում Ծաղկասարից սկիզբ առնող գահավեժ ջրվեժը, լսում գութանավորների հորովելը, կաքավների կվկվոցն ու գառների մայոցը և մանդակ քաղող մանկամարդ աղջիկների ու ջահել հարսների երգն ու ծիծաղը:

Հայկական ավանդական կենսընթացում թոնիրը համարվում է ընտանեկան միաբանության խորհրդանիշ, «ջերմացնող և սննդող հնոց, գերազանցապես սուրբ և խորհրդավոր հարգանքի առարկա»³, որի վառ աչքի առաջ կատարվում են ընտանեկան կյանքի բազմաթիվ ծեսեր, պաշտամունքներ: Մայրիկի մահից հետո տունը օտար էր դարձել բոլորի համար, բայց Սևուկը առանձնակի սիրով է հիշում մեծ երդիկը, որտեղից արևի շողերը շեղությամբ թափանցում էին ներս և խրճիթի կենտրոնում գտնվող կլոր մեծ թոնիրը, որը մշտապես ծածկված էր քուրսիով, իսկ վերջինս՝ մայրիկի ձեռքով գործած վարդագույն կարպետով, որի չորս կողմերում, ըստ հասակի, ճաշի էին նստում տնեցիները:

Գարնանը ծաղիկ հիվանդությունը պատել էր եղբոր՝ Վարդանի մարմինը, և Սևուկը ամեն օր՝ արևածագին, քնաթաթախ, հովվական կեռ կոպալը ձեռքին, գառներն առաջ արած, գնում էր Ծաղկասարի լանջերը: Գառները հանգիստ չէին տալիս Սևուկին, թոչկոտում էին դետուդեն, մտնում ամեն տեսակ թփերի մեջ՝ արտասվելու չափ զայրացնելով նրան: Զայրանում էր ոչ թե չարչարվելու համար, այլ վախենում էր, որ կորչեն կամ ժայռերից վայր ընկնեն, դրա համար էլ չսպասելով արևի մայր մտնելուն՝ օրը ցերեկով վերադառնում էր տուն՝ վազելով միանում ծառի փշակում իրեն սպասող ընկերներին:

Գյուղատնտեսական աշխատանքներին, վարուցանքին Սևուկը մասնակցում էր կրկնակի եռանդով. նա ոչ միայն լուծ էր քաշում, այլև հանգստի ժամերին, կուժը թևի տակ դրած, վազում էր աղբյուրը՝ սառը ջուր բերելու, անասուններին կեր տալու, մոտակա անտառից ճիպտաներ բերելու և այդ ամենը անում էր ամենայն պատասխանատվությամբ՝ ձգտելով նմանվել իսկական տղամարդու համբավ ձեռք բերած իր ավագ եղբայրներին:

Գիրքը ներծծված է հայկական նահապետական գերդաստանի, երիտասարդ հարսների չիտականության, ավագության կարգի, արյունառությամբ դաշն կնքելու, ինչպես նաև հարևան քրդերի հետ ունեցած ծանր փոխհարաբերությունների, նրանց կյանք ու կենցաղի, ամուսնարնտանեկան սովորությունների մասին ազգագրական հետաքրքիր մանրամասներով:

Սյա առումով ցուցանշական է քրդերի նշանդրերի ծեսը, որին Սևուկը ականատես է լինում հոր գործի բերումով: Լավ տիրապետելով ասիացի ժողովուրդների լեզուներին՝ հայրը խնամախոս եկած քրդերին պետք է ներկայացնեի Հասան բեկի աղջկա՝ 15-ամյա Զարեի գլխագի-

³ Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն. Հայկական հին հավատալիքները. – «Հայրենիք» (Բնստոն), 1940, -5, էջ 51:

նր. «– Բեկի թանկագին աղջկա գլուխը արժե հինգ հարյուր ոչխար, քսանյոթ արաբական ձի, հիսուն ջորի, հազար հատ օսմանյան ոսկի և բեկի քսանյոթ տղաներին՝ մեկական քուչաչափ⁴ հրացան» (էջ 31):

Պակաս ուշագրավ չեն Սևուկի մտորումները քրդերի՝ աղջիկ ծախելու այս պապական սովորության շուրջ. «Հետաքրքրությամբ նայելով Ջարեին՝ ակամայից մտածում էի, թե այդ փոքրիկ սև աղջիկն ինչ առավելություն ուներ մեր հարս Աչանի նկատմամբ, որին մեր տուն բերելիս գոնե մի մաքի էլ չտվեցինք, այլ ընդհակառակը, ինքն էր բերել մի շարք նվերներ: Վերջապես Ջարեն ինչո՞վ էր լավ իմ քույր Վարդանուշից, որն ավելի գեղեցիկ էր և աշխատասեր» (էջ 31): Սևուկի զարմանքը հասկանալի է, քանի որ հայկական ավանդական կենսընթացում կինն իսկապես հարգանք է վայելել, իսկ նրանց նկատմամբ կիրառված արգելանքները հասարակական-քաղաքական անբարենպաստ իրավիճակներում ընտանիքի բարոյական հիմքերը ամուր պահելու նպատակ են հետապնդել:

Հրաչյա Գևորգյանը առանձնակի գուրգուրանքով է հիշում իր ավագ քրոջը՝ Աննային և ավագ եղբոր կնոջը՝ Աչանին, որը գեղեցիկ էր, խելոք, վերին աստիճանի համեստ ու տնարար: Նա հազիվ կլիներ 18 տարեկան և ամուսնության առաջին իսկ օրից բազմանդամ ընտանիքի ամբողջ հոգսը վերցրեց իր ուսերին և փոխարինեց իր հարազատ մորը: Ամուսնուն բանակ տանելուց հետո նա անասելիորեն տանջվում էր: Սևուկը նկատում է, որ ռազմաճակատում հայ զինվորների անհուսալի վիճակի մասին լուրը սուր դաշույնի պես խոցեց Աչանի կարոտած սիրտը:

Այս երկու անձնուրաց կանայք, արհամարհելով վտանգը, գիշերով բարձրանում են Ծաղկասարի ձյունապատ գագաթը՝ հողին հանձնելու Բաղալի՝ բաց երկնքի տակ մնացած մարմինը: Նրանց աննկատելիորեն հետևում է Սևուկը, որի աչքերի առաջ սիրելի եղբոր պատկերն էր՝ «բարձրահասակ ու հաղթանդամ, ջրուտ բազուկներով, դուրեկան դիմագծերով: Նա այնքան ուժեղ էր, որ գյուղի երիտասարդ տղաներից ոչ մեկը ըմբշամարտի մեջ նրան չէր կարող հաղթել» (էջ 17): Այն խոնավ ցուրտ երեկոյան, խոնարհվելով Բաղալի թարմ գերեզմանի վրա, Սևուկը երդվում է կենդանի մնալու դեպքում վրեժխնդիր լինել: Եվ չկար մի գիշեր, որ երազում չտեսներ եղբոր թաղման տխուր տեսարանը, Աննայի ու Աչանի ողբը, չկրկներ ոսոխների նկատմամբ վրեժ լուծելու իր սոված երդումը:

Սևուկը երախտապարտ է քուրդ Մամոյի Բաժդին անունով որդուն, որն իր հորից ծածուկ Աննային ու Աչանին ուղեկցել է Ծաղկասար: Քուրդ Մամոյի և նրա ավագ որդիների համեմատ՝ Բաժդինը խղճով էր և տեսնես գիտե՞ր, որ ինքը ծնվել է հույն ճանապարհորդի երիտասարդ կնոջից, որին հափշտակել է իր հայրը և որը հալածանքներից մահացել է քսան տարեկան հասակում:

⁴ Կարճակոթ:

Գրախոս Ա. Մելքոնյանը իրավացիորեն գտնում է, որ այս գրքի միջոցով հանրությանը հնարավորություն ընձեռվեց «մի հայ ընտանիքի կյանքի օրինակով էլ ավելի հստակ պատկերացում կազմելու XX դարի սկզբին մեր ժողովրդի հետ տեղի ունեցած մեծագույն ողբերգության մասին: Սույնով նաև հարստացան մասնագետ-պատմաբանների գիտելիքները խնդրի վերաբերյալ մեր համազգային հայեցակարգային մոտեցումները հստակեցնելու և բռնազավթած հայրենիքն իր օրինական տիրոջը վերադարձնելու հայոց ազգային պայքարի ճանապարհին» (էջ 11):

Հեղինակի թոռը՝ Միսակ Մխիթարյանը, հրատարակելով սույն գիրքը, «Երկու խոսքում», իրավամբ, արժանին է հատուցում իր տիկնոջը՝ Երևանի պետական համալսարանի ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հասմիկ Բաղդասարյանին, որը անձնադիր նվիրումով ոչ միայն վերծանել, խմբագրել և հրատարակության է պատրաստել ամուսնու պայի՝ Էդեռնից մագապուրծ Հրաչյա Գևորգյանի հուշ-վկայությունները Վանի նահանգի Նորդուզ գավառակի Դիմ գյուղի և շրջակա տարածքների հայերի տեղահանության ու կոտորածների սահմուկեցուցիչ մանրամասների մասին, այլև հպարտանում է գրքի հերոսների այն բարձր բարոյական նկարագրով, որը նրանք կարողանում են պահպանել ճակատագրով իրենց բաժին հասած մահվան անվերջանալի երթում:

Գիրքը պարտքի ու նվիրումի արգասիք է, որի նշանակությունը, հատկապես կարևորվում է իբրև Հրաչյա Գևորգյանի ծննդավայրի՝ Նորդուզ գավառակի Դիմ գյուղի հայ բնակչության մասին առաջին ու ամփոփ փաստագրություն:

Այն արժանի ներդրում է Մեծ Եդեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին՝ ի հիշատակ գաղթի ճամփաներին գոհ դարձած, անհետ կորած ու անշիրիմ մեր հայրենակիցների:

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ